

նրեցաւ և տարուեցաւ Մէհէմմէտի առջև, որ չարա-  
չար տանջելով սպաննեց զայն Տիքրէի մէջ (1542ին)։

Մէհէմմէտ, այս յաջողութենէն քաջալերուած,  
իր կարգին հետապնդեց Փորթուգալցիները, վստահ  
թէ Քրիստափորի մահէն յետոյ անոնք իր դէմ ոչինչ  
պիտի կարենան ընել և ինք պիտի կրնայ բովանդակ  
Հապէշիստանի տիրել։ Բայց Փորթուգալցիք հասնե-  
լով Տէմպէս գաւառը, ուր կը գտնուէին կղզտիոս  
թագաւորը և իր բանակը, ըրին անոր թելադրու-  
թիւններ, որոնց անսաց թագաւորը։ Փորթուգալցիք  
իրենց պարտութեան վրէժը լուծելու համար քաջա-  
բար կռուեցան։ Քրիստափորի հետեւորդներէն Պետ-  
րոս Լեւոն անակնկալ յաջողութեամբ մը հեռուէն ա-  
տորճանակով մը գլուխէն վիրաւորեց Մէհէմմէտը և  
սպաննեց զայն։ Ապոր վրայ մահմետական բանակը  
քայքայուեցաւ և զօրքերը փախուստ տուին։

Հապէշական հոգերը գրեթէ փրկուեցան։

Նոյնպէս 1538ին՝ Եթովպացիք միայն Փոր-  
թուգալցուց օգնութեամբ յաջողեցան վանել այն ար-  
շաւը, զոր իսլամները կատարեցին Էմիր Չէյլահի  
(Zeilah) գլխաւորութեամբ, աւերելով Ասմառան և  
Տիքրէն ու քանդելով Աքսոււմը։ Դուրսէն, ինչպէս  
ներսէն ալ, մահմետականները կ'սպառնային հապէշ  
պետութեան և կրօնին։

1540ին անոնք ներքին յեղափոխութեամբ մը  
տիրացան երկիրին մայրաքաղաքին՝ Կէօնտէրի, ուր  
այն ատեն բազմաթիւ մահմետական սարուկ-  
ներ կային։ Ասոնք դաւադրաբար յանկարծ խռո-  
վութիւն հանեցին և փորձեցին քաղաքին տիրել, Հա-  
պէշները վանելով կամ սպաննելով։ Ճրուած Հապէշ-  
ները հետզհետէ հաւաքուեցան իրարու քով և օրոշե-